ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Համագործակցությունն ու փոխհարաբերություններն ծնողների հետ»

ԱՌԱՐԿԱ՝ Տարրական դասարանների ուսուցիչ

ՀԵՂԻՆԱԿ՝ Շուշան Իվանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սյունիքի մարզ Նորավանի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

2023

Բովանդակություն

1. Ներածություն.....էջ 2
2. Հետազոտության նպատակը և խնդիրները.....էջ 3
3. Գրականության ակնարկ.....էջ 4
Ենթագլուխներ
1. 1 Դպրոց-ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության հիման վրա.....էջ 4
1.2 Ծնողական ժողովների անցկացումը, դրանց նպատակը.....էջ 7
1.3 Ծնող-ուսուցիչ համագործակցությունը, դպրոցի և ընտանիքի համագործակցության ոլորտում առկա խոչընդոտները և այդ խոչընդոտների հաղթահարման ուղիները.....էջ 11
4. Հետազոտության ընթացք.....էջ 14
5. Եզրակացություններ և առաջարկություններ.....էջ 16
6. Առաջարկություններ.....էջ 17
7. Ամփոփում.....էջ 18
8. Օգտագործված գրականության ցանկ.....էջ 19
9. Դասի պլան 1 .....էջ 21
10. Դասի պլան 2.....էջ 22
11. Նկարներ դասի պլանի վերաբերյալ .....էջ 24
11. Դասի պլան 3.....էջ 25

Ներածություն

Ներկա ժամանակներում աշխարհը փոխվում է գլխապտույտ արագությամբ և յուրաքանչյուր ոլորտում իրականացվող փոփոխությունների շղթան ստիպում է վերանայել հին արժեքներն և ստեղծել նորերը: Ուսումնառության մեջ, աշխատանքում և կենցաղում մարդն անընդհատ հայտնվում է անորոշություններով լի իրադրությունների մեջ: Դրանց հարուցած դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ինքնատիպ, ստեղծագործական լուծումներ գտնելու կարողություններով օժտված սերունդ դաստիարակելը: Այս պարտականությունը դրված է, թե՛ դպրոցի ուսուցիչների, թե՛ ծնողների վրա: Վստահելով ուսուցչին՝ ծնողը երեխայի մեջ հարգանք է սերմանում դպրոցի և ընդհանրապես կրթության հանդեպ:

Երեխաները՝ որպես ներկայի կերտողներ և ապագայի շարունակողներ, միշտ էլ գտնվում են հասարակության ուշադրության կենտրոնում, ուստի պատահական չէ , որ արդի պայմաններում ստեղծվում են նոր մեթոդներ, ուսուցման նորանոր տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս մարդուն գործել անորոշության կամ նորույթի իրադրություններում, հանգեցնում են անսպասելի արդյունքների ու եզրակացությունների, որովհետև նորին ձգտելը մարդկային երևակայության առաջին պահանջմունքն է և մնածողության, հույզերի ու շփման քարացածությունը հաղթահարելու գործընթացը:

Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացման հիմքում ընկած է կրթությունը, որն ուղեկցում է մարդուն ծնված օրվանից մինչև չափահասություն: Սակայն երեխայի արդյունավետ ուսումնառությունը դպրոցում պայմանավորված չէ միայն ուսումնական գործունեության հաջող մեկնարկով:

Երեխայի բարեհաջող մուտքը նոր ուսումնական գործունեություն կախված է նրա հոգեկան պատրաստվածությունից: Դրան հասնելու քայլերը պետք է կատարվեն ավելի վաղ՝ մինչը դպրոց հաճախելը: Այսինքն՝ պետք է օգնել երեխային ճիշտ ապրել իր մանկությունը, իսկ դրա համար պատասխանատվություն են կրում և՛ընտանիքը, և՛ դպրոցը:

Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսանում սովորողի կրթության ու դաստիարակության իրավունքը և այդ իրացման ճանապարհին ծնող-ուսուցիչ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատումն է համատեքստում, որ երկու կողմն էլ շահագրգիռ են, որ այդ իրավունքի իրացման գործընթացը լինի արգասաբեր, հաջողություններով ու հաղթանակներով լի:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u>

Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել ծնող-ուսուցիչ կապի դրական ազդեցությունը սովորողների դաստիարակության, ուսումնառության ընդհանուր զարգացման ու

աշխարհահանաչողության վրա: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն
- Ներկայացնել դպրոց-ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության հիման վրա
- Պարզաբանել ծնողական ժողովների անցկացումն ու դրանց նպատակը
- Լուսաբանել ծնող-ուսուցիչ համագործակցությունը, դպրոցի և ընտանիքի համագործակցության ոլորտում առկա խոչընդոտները և այդ խոչընդոտների հաղթահարման ուղիները:

Գրականության ակնարկ

1. 1 Դպրոց-ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության հիման վրա

Ժամանակակից հասարակության մեջ երեխաները, թե ընտանիքում, թե դպրոցում պիտի ստանան միասնական և ներդաշնակ դաստիարակություն:

Ինչ խոսք, երեխայի առաջին կրթողները ծնողներն են և նրանք ունեն առաջնային պարտականություններ երեխայի ֆիզիկական կոփվածքի և արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման գործում: Սովորողի կրթության և դաստիարակության մեջ հաջողության հասնելու համար ուսումնառության հենց առաջին օրերից դասվարը ծնողի հետ հանդիպումների թեմաները պետք է բխեցնի երեխայի ուսումնառության ընթացքում հանդիպած դժվարությունների հաղթահարմանն ուղղված խնդիրներից: Ծնողների հետ անցկացվող յուրաքանչյուր զրույցի ժամանակ հարկավոր է ներառել տարաբնույթ հոգեբանական պահեր, մանրամասնորեն վերլուծել յուրաքանչյուր երեխային վերաբերող մտահոգիչ հարցերը և փորձել դրանց տալ սպառիչ պատասխաններ:

Անհրաժեշտ է նրանց ցուցաբերել համապատասխան օգնություն հետագա քայլերի համար և զրույցների միջոցով ստեղծելով փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Ուսուցիչ-ծնող պատշաճ փոխհարաբերությունները նպաստում են սովորողի անհրաժեշտ գիտելիքների ձեռք բերմանը և անհատի արժեքային համակարգի ճիշտ ձևավորմանը: Քննարկելով տարաբնույթ հարցեր ծնողի հետ ուսուցչի համար առավել ակնհայտ են դառնում աշակերտի ունակությունները, կարողությունները, հետաքրքրությունները, առկա խնդիրները, և դրանց առաջացման պատճառներն ու հաղթահարման ուղիները:

Դպրոցներում՝ հատկապես տարրական դասարաններում հրատապ խնդիր է համարվում ուսումնական գործընթացում երեխաների կրած դժվարությունների բացահայտումն ու դրանց կանխումը:

Այն սոցիալական դերը, որ ստանձնում է ուսումնական հաստատություն մուտք գործելիս, նոր պարտականություններ է առաջադրում: Դրանք են՝ ժամանակին և պարտաճանաչ կերպով հաճախել տվյալ հաստատությունը, ուշադիր լսել մանկավարժին, գործուն մասնակցություն բերել դասերին և կատարել տրված հանձնարարությունները: Եվ կամա, թե ակամա ծնողը երեխայի ձեռքբերումները սկսում է համեմատել դասարանում ընդգրկված մյուս աշակերտների ձեռքբերումների հետ: Երբ նրան չի գոհացնում երեխայի առաջադիմությունը կամ վարքագիծը, սկսում է անհանգստանալ և մտահոգվել, ինչն էլ ուղեկցվում է երեխայի նկատմամբ խստապահանջության նորանոր դրսևորումներով: Երեխան ծնողի կողմից ծանրաբեռնվում է լրացուցիչ հանձնարարություններով, զրկվում խաղից և զվարճանքներից: Արդյունքում առաջադիմության ցուցանիշները ավելի են ընկնում և երեխան դառնում է նյարդային: Նա փորձում է հակառակվել ծնողի ճնշումներին, երբեմն էլ հրաժարվում է դպրոց հաճախելուց:

Ծնողի գիտակցությանը պետք է հասցնել այն իրողությունը, որ յուրաքանչյուր երեխա անհատականություն է, եզակի երևույթ և չի կարելի նրան համեմատել այլ մարդու հետ ու թերագնահատել նրա հնարավորությունները[1]:

Ծնողին պետք է իրազեկել, որ երեխայի ձեռքբերումները պետք է դիտարկել որպես անհատական զարգացում: Անհրաժեշտ է նրա ձեռքբերումները համեմատել միայն իր նախորդ փուլում ունեցած արդյունքների հետ: Երեխային պետք է վերաբերվել որպես փոքրիկ մարդու և հաշվի նստել նրա կարծիքի հետ: Գաղտնիք չէ, որ երեխայի անհատականությունը նույնպես դրսևորվում է իր խառնվածքով, մտածողությամբ, դատողություններ

անելու իր յուրահատկությամբ, հետաքրքրություններով, նպատակներով և դրանց իրականացմանն ուղղված ֆայլերով: Հայտնի է , որ երեխան տանը, դպրոցում, բակում, տարեկիցների հետ հարաբերվելիս տարբեր կերպ է իրեն պահում, և որպեսզի կարողանա լիարժեք ինքնադրսևորվել, անհրաժեշտ է օգնել և խրախուսել նրա յուրաքանչյուր ֆայլը, ապա միասնաբար վերլուծել կատարած ֆայլի հետևանքները: Կրթության այդ կարիքները բարելավելու համար անհրաժեշտ է ծնողներին ներգրավվել ուսումնական գործընթացի մեջ: Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է, որը երեխայի դաստիարակությամբ պետք է զբաղվի ծնվելու պահից: Դաստիարակության հաջողության առաջին պայմանը և ամենամեծ դերն դրված է ընտանիքի վրա: Ընտանեկան առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են բարեխիղճ, հոգատար և ուրախ մարդիկ:

———

1 Զադոյան Ա.Մ. Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում/ Մանկավարժություն N 1 ՀՑԴ 373 Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014

Ընտանիքը պետք է երեխայի համար լինի հոգեկան հավասարակշռության, պաշտպանվածության և ապահով զգացողության վայր:

Ուսուցիչ-ծնող օղակների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները ու ուսուցիչները պատասխանատվություն են կրում միևնույն կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմները, դրանց լուծման ուղիները: Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորող հանգամանքներից է ծնողների իմացական կարողությունները, հայացքներն ու դիրքորոշումները: Շատ կարևոր է նաև ծնողի կողմից ազնիվ ու անվերապահ մոտեցումն ուսուցչին, դպրոցին:[2]

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ:

Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Ուսումնական գործընթացին ծնողների ներգրավվածությունը մեծապես կարող է պայմանավորել սովորողների հաջողությունը: Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից, վերջինիս ներգրավվածությունը սովորողի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով: Այն սովորողները, ում ծնողները ավելի բաց են

համագործակցության համար, հաճախակի են հետաքրքրվում իրենց երեխաների վարքով ու առաջադիմությամբ, ավելի են մոտիվացվում: Արդյունքում նրանք դառնում են ավելի պատասխանատու, բարձրանում է աշխատունակության մակարդակը և ունենում են հաջողություններ:

———

2 Ասատրյան Ա.Ա. Դպրոցամուտը՝ սոցիալական նոր միջավայրին երեխայի հարմարվելու կենսափուլ, Մանկավարժություն, 2011, հմ 7:

Անշուշտ, ծնողների ներգրավվածությունը դպրոցի, դասարանի սովորողի դպրոցական կյանքին դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը նպաստում է վերջիններիս հետ բարեկամական հարաբերությունների հաստատմանը՝ ստեղծելով բարոյահոգեբանական կայուն միջավայր:

Ճիշտ են վարվում այն մանկավարժները, որոնք ոչ միայն խորհուրդներ են տալիս, այլև ընդունում են ծնողների առաջարկությունները: Նրանք սովորեցնողի դերի մեջ չեն մտնում, ծնողներին քարոզ չեն կարդում, այլ աշխատում են ձեռք բերել նրանց վստահությունը և անկեղծությունը: Նախընտրելի է ծնողների հետ զրուցելիս օգտագործել հետևյալ խոսելաոճը. <<Իսկ դուք ինչպե՞ս եք կարծում>>, <<Եկեք միասին քննենք, թե ինչպես կարելի է դուրս գալ այս վիճակից>> և այլն:

1.2 Ծնողական ժողովների անցկացումը, դրանց նպատակը

Սա ընտանիքի հետ դասվարի կապի ամենատարածված ձևն է: Այդ ընթացքում քննարկվում են դպրոցում և ընտանիքում երեխաների դաստիարակությանն վերաբերող կարևոր հարցերը: Լավ նախապատրաստված և հմտորեն անցկացված ժողովները օգնում են ծնողներին, որ նրանք արդյունավետ կազմակերպեն երեխաների դաստիարակությունը: Հարկավոր է, որ դասվարը չսահմանափակվի միայն առաջադիմության արդյունքների և կարգապահության վիճակի մասին տեղեկություններ տալով: Կարևոր է ծնողներին ծանոթացնել ընտանեկան դաստիարակության փորձին, նրանց օգնել առավել բարդ հարցերում:

Ժամանակ առ ժամանակ դասվարները պետք է անց կացնեն նաև ծնողական թեմատիկ ժողովներ: Դրանց նպատակը պետք է լինի ծնողներին զինել մանկավարժական կոնկրետ գիտելիքներով, ծանոթացնել ընտանիքում դաստիարակության առաջավոր փորձին: Այդպիսի ժողովների թեմաները նախատեսվում են դաստիարակության կոնկրետ խնդիրների և ծնողների պահանջների նկատառմամբ: Հենց դպրոցի դասարանի կյանքն էլ հուշում են ժողովների թեմաներ՝ <<Ինչպե՞ս օգնել երեխաներին՝ լավ սովորելուն>>, <<Դպրոցականներին վարժեցնել ուժերին համապատասխան աշխատանքի>>, <<Հայրենասիրական դաստիարակության խնդիրներ>>, <<Արդարացիություն և ազնվություն դաստիարակելու մասին>>, <<Օրինակելի վարքի հմտությունների և

սովորությունների մշակումն ընտանիքում>>, <<Ի՞նչ և ինչպե՞ս կարդալ երեխաների համար>>, <<Ընտանիքում երեխաներին խրախուսելու և պատժելու սկզբունքները>>, <<Ծնողների հեղինակությունը և անձնական օրինակը>>:

Երբեմն ծնողական ժողովներն ընթանում են սակավամարդ կազմով: Այդպես լինում է այն դեպքում, երբ դասվարն անհրաժեշտ շփման եզր չի փնտրում աշակերտների ընտանիքների հետ: Հարկավոր է ժողովի օրակարգի մասին նախապես տեղյակ պահել ծնողներին: Պետք չէ ժողովը վերածել դատի՝ հետ մնացող անկարգապահ աշակերտների ծնողների նկատմամբ: Այդպիսի ժողովներին ծնողներն աշխատում են չմասնակցել, կամ նույնիսկ ժողովից հետո մարմնական պատիժների են ենթարկում իրենց երեխաներին[3]:

Ծնողները երեխաների նկատմամբ խրախուսանքներ և պատիժներ կիրառելիս երբեմն սխալներ են թույլ տալիս: Առանձին ծնողներ իրենց երեխաներին դրամական պարգևներ են տալիս լավ թվանշանների համար, ոմանք անարդարացիորեն պատժում են երեխաներին: Լինում են նաև խելամիտ ու արդարացի խրախուսանքներ և պատիժներ կիրառելու օրինակներ: Դասվարը ի մի բերելով և կշռադատելով այդ ամբողջ նյութերը, հերթական ծնողական ժողովներում կարող է զրույց անցկացնել <<Խրախուսանքների և պատիժների կիրառումը ընտանիքում>> թեմայով: Զրույցի՝ կոնկրետ օրինակներով զուգակցումը շատ բան կսովորեցնի ծնողներին: Առանձին դասարաններում ցանկալի է անցկացնել աշակերտների հայրերի ժողովներ և ճնշության առնել հոր դերը երեխաների դաստիարակության գործում: Այդպիսի ժողովները գործարար աշխուժություն են առաջացնում նամանավանդ, երբ զեկուցողը կոնկրետ օրինակներ է բերում ընտանեկան դաստիարակության փորձից: Պարտադիր չէ այդ դեպքում անվանել երեխաների դաստիարակությունից խուսափող հայրերի ազգանունները: Ցանկալի է ներկայացնել ընտանեկան դաստիարակության

———

3 Ասատրյան Ա.Ա. Դպրոցամուտը սոցիալական նոր միջավայրին երեխայի հարմարվելու կենսափուլ, Մանկավարժություն, 2011 ,հմ 7

հաջողությունների և թերությունների դեպքեր, որպեսզի ծնողները զգան իրենց վրիպումները և անեն անհրաժեշտ հետևություններ[4]:

Խրախուսելի են նաև ծնողների և աշակերտների համատեղ ժողովները: Քննության են առնվում ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման հարցերը:

Աշակերտները ցուցադրում են իրենց նվաճումները ուսման մեջ, պատմում են տարբեր խմբակներում տարվող աշխատանքների մասին:

Դասախոսությունների ժամանակ ծնողները ոչ ամեն անգամ են կարողանում ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները: Մեծ լսարանում նրանք ամաչում կամ հնարավորություն չեն ունենում հարց ուղղել ուսուցչին: Ուստի դպրոցներում կամ առանձին դասարաններում պետք է անցկացնել համակարգված խորհրդատվություններ ընտանեկան դաստիարակության հարցերի վերաբերյալ: Այդ ընթացքում ծնողները կարող են փորձառու մանկավարժի հետ զրուցել ցանկացած հարցի շուրջ, ստուգել իրենց կարծիքները, համոզվել դաստիարակության մեթոդների ճշտության կամ անճշտության հարցում:

Սովորաբար ծնողներին հետաքրքրում են երեխաների հնազանդության, կամակորության և համառության հաղթահարման, նյարդային երեխայի դաստիարակության, դպրոցականի ծուլության և անկազմակերպվածության դեմ պայքարի հարցերը: Այս հարցերին պատասխանելու համար դասվարը պարզում է երեխաների բնավորության առանձնահատկությունները և ընտանեկան դաստիարակության պայմանները: Դա հնարավորություն է տալիս կոնկրետ պատասխանել ծնողների հարցերին: Այդ նպատակով կարելի է հրավիրել ոչ միայն մանկավարժության գծով մասնագետների, այլև հոգեբանների, բժիշկների և իրավաբանների:

Ծնողները մանկավարժական գիտելիքներ կարող են ձեռք բերել ոչ միայն դպրոցում կազմակերպվող ժողովներին, այլև համապատասխան գրականություն ուսումնասիրելով: Տարբեր ժամանակներում հրատարակվել են բազմաթիվ գրքեր, բրոշյուրներ և հոդվածների ժողովածուներ ընտանիքում երեխաների դաստիարակության վերաբերյալ:

———

4 Զադոյան Ա.Մ. Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում / Մանկավարժություն N 1 ՀՑԴ 373, Գյումրու Մ.Նալբանդյանի պետական մանկավարժական ինստիտուտ, 2014

Դասվարի խնդիրներից մեկն էլ հրատարակված նյութերի մասին ծնողներին տեղեկացնելն է: Միաժամանակ կարելի է նրանց խորհուրդ տալ ռադիոով ու հեռուստատեսությամբ լսել հաղորդումներ ընտանիքում երեխաների դաստիարակության թեմաների վերաբերյալ, ինչպես նաև դիտել կինոֆիլմեր և ներկայացումներ: Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար, դասվարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման:Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային կրթական և այլ բնույթի հարցերը: Ժողովի ժամանակ էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճն ու նպատակը: Ժողովի ընթացքն արձանագրվում է ըստ անհրաժեշտության՝ կարելի է կազմակերպել արտահերթ ծնողական ժողովներ:

Ուսուցիչը նախ և առաջ ծնողի համար ներկայացնում է առկա խնդիրը կամ իրավիճակը, խոսում դրա հնարավոր դրական ու բացասական ենթատեքստի ու զարգացման հնարավոր սցենարների , հետևանքների մասին: Այստեղ կարևոր է ծնողական համայնքի արձագանքը՝ հետադարձ կապ ստեղծելու կարողությունը: Շատ կարևոր է , որ ծնողն ընդունի և՛ դրական, և՛ բացասական քննադատողական դիտարկումները:

Շատ հաճախ՝ վերջին դիտարկումների պարագայում ծնողները ցուցաբերում են անհավասարակշիռ ու պաշտպանողական վարքագիծ: Մինչդեռ շատ կարևոր է արձանագրել խնդիրը, դնել այն քննարկման, որպեսզի դրան հետևի լուծումներ գտնելու հնարավոր հիմնախնդիրներն ու բացթողումները շտկելու փուլը: Կարևոր է, որ ծնողն այս պարագայում լինի հավասարակշռված, հասկանա խնդրի բուն էությունը, դրանից բխող հետևանքներն ու հնարավոր վտանգները: Այս առումով անկյունաքարային է ուսուցչի մոտեցումը: Քացառապես բաղաբավարի մանկավարժական էթիկայի

կանոնների պահպանմամբ պետք է տեղի ունենա ուսուցիչ-ծնողական համայնք շփումն ու համագործակցությունն [5]:

Լարվածությունը, կոնֆլիկտների անկառավարելիությունը անշուշտ այս գործընթացում տեղ չունեն: Կողմերն երկուստեք պետք է գիտակցեն, որ քննարկումն ու բացասական կողմերի մատնանշումն ուղղված է ոչ թե իրենց իրավունքներին, կամ արժանապատվության ոտնահարմանը, այլև հիմնախնդրի բարձրաձայնմանն ու հնարավոր լուծումներ գտնելուն:

Ծնողական ծողովների ընթացքում կատարած արձանագրումների և խնդիրների բարձրաձայնման հատվածում կարող են ներկա գտնվել նաև այլ ուսուցիչներ, սոցմանկավարժներ, հոգեբաններ: Այսպես քննարկումն ավելի արդյունավետ և կառուցողական բնույթ կարող է կրել: Ծնողական համայնքի հետ իրականացվող հանդիպումների՝ ժողովների ժամանակ ուսուցչի դերը չի սահմանափակվում բացառապես խնդիրների վերհանմամբ: Շատ կարևոր է նաև սովորողների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումը: Այս առումով ուսուցիչը կարող է օգտագործել մի շարք գործիքներ, որպեսզի ծնողների համար ապահովի մի շարք նեղ մասնագիտական կարողունակություններ, որոնք բնորոշ են մանկավարժական աշխատողներին, սակայն շատ կարևոր են նաև ծնողների՝ որպես երեխայի դաստիարակման առաջնային օղակի համար: Կարելի է կիրառել ՏՀՏ գործիքներ, որպեսզի ասելիքն ավելի պարզ ու հասանելի դառնա:

1.3 Ծնող-ուսուցիչ համագործակցությունը, դպրոցի և ընտանիքի համագործակցության ոլորտում առկա խոչընդոտները և այդ խոչընդոտների հաղթահարման ուղիները

Ընտանիքն ու դպրոցը մանկության ու պատանեկության ընթացքում անհատականության սոցիալականացմամ երկու հիմնական և հավասար սուբյեկտներ են: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունն և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Խոսելով դպրոցի և ընտանիքի փոխհարաբերությունների մասին՝ առաջին հերթին կարևոր է նշել, որ դրանք պետք է

———

5 Հարությունյան Գ. իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Ե.2003

հիմնված լինեն փոխկապակցման կրթական գործունեության, փոխլրացման սկզբունքների վրա: Ուսուցչի և աշակերտների միջև փոխգործակցության արդյունավետությունն կրթական գործունեության գործընթացում մեծապես կախված են ուսուցչի՝ ծնողների հետ համագործակցությունից: Ծնողների հետ շփման գործընթացում է, որ ուսուցիչը գիտակցում է իր դերը երեխայի դաստիարակության գործում: Ծնողների հետ համագործակցությունը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել երեխային տարբեր տեսանկյուններից և ճանաչել երեխայի ներաշխարհը [6]:

Ուսուցիչ-ծնողներ հարաբերությունները հաջողված են, եթե նրանք միասին փորձում են գտնել ամենաարդյունավետ ուղիները, որոշել մանկավարժական կրթության բովանդակությունն ու ձևերը: Ծնողների ու մանկավարժների վերջնանպատակը նույնն է՝ հաջողել երեխայի աշխարհայացքի ձևավորման, դաստիարակության անչափ պատասխանատու գործում: Նման արդյունք իհարկե կարող է լինել, երբ նրանք դաշնակիցներ դառնան: Այս միությունը հիմնված է ձգտումների միասնության, կրթական գործընթացի վերաբերյալ տեսակետների, համատեղ մշակված համընդհանուր նպատակների և խնդիրների նախատեսված արդյունքին հասնելու ուղիների վրա:

Ֆրանսիացի պատմաբան Լամարտինը ասում է. <<Մտքի ուսուցիչը դպրոցում է, հոգու ուսուցիչը՝ ընտանիքի ծոցում>>, ուստի ամենալավ սոցիալական կրթությունը դպրոց-ընտանիք կրթությունն է:

Ուսուցիչներն ու ծնողները՝ որպես դաստիարակության գործընկերներ պետք է լրացնեն միմյանց, ունենան փոխադարձ հարգանք և վստահելի հարաբերություններ: Ծնողները պետք է իրենց երեխաներին սովորեցնեն ընկալել կյանքը որպես ամենամեծ արժեք: Ծնողները իրենք պետք է սովորեն լսել և լսել իրենց երեխաներին, հասկանալ միմյանց: Ուսուցիչը պետք է ծնողների մոտ դրական վերաբերմունք ձևավորի իրենց երեխաների ուսուցման, դաստիարակության և զարգացման խնդրի նկատմամբ, ճիշտ պարզի անախորժության պատճառը և ընտրի ծնողների հետ աշխատելու առավել արդյունավետ ձևերն ու մեթոդները՝ ուղղված դաստիարակչական մտքի բարելավմանը, ծնող-երեխա անախորժությունների հաղթահարմանը:

Ծնողական համայնքի հետ աշխատանքները ներառում են. ծնողական սեմինարներ, խմբային և անհատական խորհրդատվություն, ծնողական հանդիպումներ,

———

6 Ասատրյան Ա.Ա. , Դպրոցամուտը՝ սոցիալական նոր միջավայրին երեխայի հարմարվելու կենսափուլ, Մանկավարժություն, 2011, հմ. 7

ծնողական համաժողովներ, գործնական աշխատանքներ, դպրոցական ու արտադպրոցական դասերին մասնակցություն և այլն[7:]

Երեխայի կրթության, դաստիարակության արդյունավետությունը ուղիղ համեմատական է դպրոցի և ընտանիքի փոխգործակցությանը: Ուսուցիչները առաջատար դեր են խաղում դպրոցի և ընտանիքի միջև համագործակցության կազմակերպման գործում: Նրանց աշխատանքի արդյունքում է , որ որոշվում է, թե ընտանիքները որքանով են գիտակցաբար մոտենում երեխաների դաստիարակությանն ու կրթությանը և այս հարցերում դպրոցի վարած քաղաքականությանն ու մասնակցում դրա իրականացմանը:

Ինչպես արդեն նշեցինք ո՛չ դպրոցը, ո՛չ ընտանիքը առանձին-առանձին չեն կարող ապահովել երեխայի անհատականության վրա ազդող գործոնների բազմազանությունը: Այդ պատճառով դաստիարակության ամբողջական սիստեմատիկ գործընթացը ենթադրում է շահագրգիռ կողմերի ջանքերի համատեղում: Դպրոցի և ընտանիքի համագործակցության գլխավոր պայմանը միմյանց գործառույթների և գործունեության բովանդակության ամբողջական ընկալումն է: Ցավոք այսօր դպրող-ընտանիք համագործակցության ոլորտում կան բավականին լուրջ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է անհատական,համակարգված ու շարունակական աշխատանք, որը հիմնականում պետք է տարվի ուսումնական հաստատության կողմից:Քննարկվող հարաբերությունների հաջող իրացումը խոսում է իրականացնող մանկավարժի մասնագիտական հմտությունների մասին: Յուրաքանչյուր ընտանիք տարբերվում է մյուսներից իր կառուցվածքով, խնդիրներով, ավանդույթներով, սովորություններով, հետաքրքրություններով, արժեքներով, բարքերով, կրթության տարբեր հնարավորություններով: Յուրաքանչյուր դպրոց նման է մյուսներին ընդհանուր ռազմավարությամբ, կրթական ծրագրերով, արժեքային համակարգով:

———

7 Մանկության հիմնախնդիրները ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները, գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե. 2016

Հետազոտության ընթացք

Իմ տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ տարրական դպրոցում ծնողները ավելի են ներգրավված ուսումնական գործընթացին, հաճախակի հնարավոր այցելում են դպրոց, դպրոց-ծնող-ուսուցիչ կապն ավելի

ամրապնդված է, քան միջին և ավագ դպրոցներում: Տարրական դպրոցում ներգրավվածությունը մեծացնելու համար Նորավանի միջնակարգ դպրոցում կազմակերպել էինք դաս-միջոցառում <Աշնան գույները> թեմայով: Միջոցառումը կազմակերպելու համար հրավիրել էինք ծնողական ժողով տարրական դասարանների ծնողների մասնակցությամբ: Ժողովին ներկայացրել էինք միջոցառման ընդհանուր կառուցվածքն ու նպատակը, որից հետո քննարկել կատարվելիք աշխատանքները: Հետաքրքրականն այն էր, որ ծնողների մեծ մասն մեծ խանդավառությամբ ցանկություն էին հայտնել մասնակցելու կազմակերպչական հարցերին, իրենց պատրաստակամությունն էին հայտնել պատրաստել աշնանային զամբյուղներ, դեկորներ՝ ձևավորման համար: Աշխատանքներն կազակերպվեցին շատ արագ, քանի որ ծնողները մեծ մասնակցություն ունեցան և՛ դահլիճի ձևավորման, և՛ զանազան ատրիբուտների բերման աշխատանքներին: Մեզ մնում էր միայն նախապատրաստվել բուն միջոցառմանը, աշակերտների հետ փորձեր կատարել և միջոցառումը հասցնել իր նպատակին: Միջոցառումն հիանալի էր, ամեն ինչ իրականացավ պլանավորվածի պես, գոհ էին և՛ ծնողները, և՛ աշակերտները, և՛ ուսուցիչները:

Սա վառ օրինակն է ծնող-ուսուցիչ-դպրոց կապի, որն միտված է բարելավել, էլ ավելի բարձր մակարդակի վրա դնել ուսուցման գործընթացը: Մենք հասկացանք, որ նմանատիպ միջոցառումներն ավելի են մտերմացնում ծնողներին և ուսուցիչներին, և ուսուցիչն սկսում է անհատապես ճանաչել յուրաքանչյուրին:

Հաջորդ ծնողների հետ համատեղ իրականացրած միջոցառումը նվիրված էր Գրքի տոնին:

Այս դեպքում դասվարները համագործակցեցին իրենց ծնողների հետ առանձին-առանձին, սակայն միջոցառումը ներկայացրեցին նույն օրը, նույն դահլիճում՝ հնարավորություն ունենալով տեսնել միմյանց աշխատանքները և հանրագումարի բերել կատարված աշխատանքները:

Յուրաքանչյուր դասարան ներկայացավ իր բեմագրով, որից հետո աշակերտները միմյանց գրքեր նվիրեցին՝ հղելով իրենց բարեմաղթանքները:

Բոլոր դասարանները ներկայացան ինքնատիպ բեմադրություններով, հետաքրքիր փաստեր ներկայացրեցին Հ.Թումանյանի մասին:

Ամենուր Թումանյանի շունչն էր թևածում՝ և՛ բեմում, և՛ երեխաների խոսքում, և՛ ձևավորման մեջ:

Ներկա էին դպրոցի տնօրինությունը,ուսուցիչները, ծնողները, համայնքի գրադարանավարը, որն էլ իր կողմից գիրք նվիրեց յուրաքանչյուր դասարանին:

Ծնող-ուսուցիչ-դպրոց կապն էլ ավելի ամրապնդվեց, միջոցառումից հետո նկատելի էր առաջընթացը ուսումնառության մեջ, նրանք ավելի հաճույքով սկսեցին հաճախել դպրոց:

Այս ամենը կարճ նկարագրվեց, բայց նշեմ, որ վերջնական արդյունքին հասնելու համար պահանջվեց բավականին երկար ժամանակ: Այսինքն՝ այդ ամենը միաժամանակ չի իրականացվել, այլ հերթականությամբ:Այդ ընթացքում դպրոցում տիրում էր ոգևորություն, խանդավառություն, բոլորը ջանում էին իրենց հանձնարարականները կատարել: Նշեմ նաև, որ սկզբում ծնողները կաշկանդված էին, բայց հաղթահարեցին այդ

կաշկանդվածությունը, սկսեցին մեծ ոգևորությամբ ներկայացնել այն, ինչ իրենց հանձնարարված էր: Ուզում եմ ծնողների արտահայտած մտքերից մի քանի մեջբերում անեմ:

*Շատ նոր գիտելիքներ, հմտություններ սովորեցինք:

*Շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք դասվարին, ավելի շատ տեղեկացանք նրա և դպրոցի պահանջների մասին:

*Ճանաչեցինք մեր երեխաներին նորովի, քանի որ երբեմն դասվարը ինչ-որ հատկանիշ է ներկայացնում և մենք զարմանում ենք, որովհետև այդ հատկանիշը տանը երեխան չի ցուցաբերել:

* Ծնողներս նաև իրար հետ շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք միմյանց:

* Երգելիս, պարելիս, արտասանելիս մտքի տեղափոխվեցինք մանկություն:

*Կուզենայինք նմանատիպ միջոցառումները շարունակական լինեն:

Եզրակացություններ և առաջարկություններ

Այսպիսով՝ ուսումնասիրելով ընտանիք և դպրոց համագործակցության երկու տարբեր տիպային մոդելներ, եկանք այն եզրահանգման, որ երեխայի դաստիարակության և զարգացման գործում մեծ դեր են խաղում ինչպես ընտանիքը, այնպես էլ դպրոցը: Ընտանիքում է տեղի ունենում երեխայի սոցիալականացումը, առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի կարիքների մասին, կրթում և դաստիարակում նրան, ուստի երեխայի դաստիարակությունը ավելի արդյունավետ կլինի դպրոց և ընտանիք, ծնող և ուսուցիչ համագործակցության ժամանակ:

Ծնողների հետ համագործակցությունը թույլ էր տալիս ուսուցչին ավելի լավ ճանաչել երեխային, իմանալ, նրա նախասիրությունների մասին, որը թույլ է տալիս պատկերացում կազմել երեխայի ներաշխարհի մասին: Ինչպես ծնողները, այնպես էլ ուսուցիչները համարվում են երեխայի դաստիարակները և երեխայի դաստիարակությունը ավելի արդյունավետ կլինի ուսուցիչ և ծնող կայուն փոխհարաբերությունների ժամանակ, քանի որ մի շարք կրթական խնդիրներ լուծելիս ուսուցիչները անհրաժեշտ խորհուրդներ են ստանում ծնողներից և հակառակը:Այսօր շատ ծնողներ սոցիալական տարբեր խնդիրների պատճառներով չեն մասնակցում իրենց երեխաների դպրոցական գործունեությանը, թողնելով երեխայի դաստիարակությունը ուսուցիչների վրա, որի ընթացքում նվազում է երեխայի հետաքրքրությունները դեպի գիտելիքը:

Ուստի կարող ենք ասել, որ ուսումնական գործընթացի հաջողությունը կախված է նրանից, թե ինչպես են զարգանում հարաբերությունները ուսուցիչների, աշակերտների և ծնողների միջև:

Ժամանակակից պայմաններում դպրոցի դերը ծնողների և ուսուցիչների ջանքերը համակարգելն է երեխայի դաստիարակության գործում: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը բարձրացնելու համար առաջարկում ենք հաճախ կազմակերպել ծնողական շաբաթներ, որոնց ժամանակ յուրաքանչյուր ծնող պետք է գտնի իր խնդրի սպառիչ պատասխանը, արտահայտի իր կարծիքը, ցանկությունը, խնդրանքը:

Առաջարկություններ

Ուսումնասիրության արդիականության հիման վրա հանդես գանք առաջարկություններով:

Հաշվի առնելով նոր ժամանակների մարտահրավերները, կրթական համակարգի պահանջները ու սովորողների՝ ամենօրյա ռեժիմով փոփոխվող հետաքրքրություններն ու պահանջմունքները՝ կարծում ենք, որ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար սովորողի ծնողն կամ օրինական ներկայացուցիչը պետք է հնարավորություն ստանա էլ ավելի շատ տեղեկություններ ունենալու այն մասին, թե ինչով է զբաղվում իր երեխան դպրոցում, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ, ինչ հետաքրքրություններ ու նախասիրություններ ունի:

Այս ամենն անհրաժեշտ է նրա համար, որ հնարավոր լինի կանխել հնարավոր բացասական սցենարները:Գաղտնիք չէ, որ դեռահասության տարիքի սովորողները հաճախ են ունենում բազմապիսի խնդիրներ, համացանցի հասանելիության պատճառով կարող են ունենալ նաև կիբերխնդիրներ, որոնք ևս բավականին վտանգավոր են:Այս տեսանկյունից կարևոր ենք համարում սովորողների վարքի կամ ուսումնառությանը ամենաչնչին խնդրի դեպքում անգամ իրազեկել ծնողին: Ավելի նպատակահարմար է, որ ուսուցիչը տեղյակ պահի ծնողին, միասին քննարկեն, ու լուծեն հարցը:

Այսպիսով՝ թե՛ ծնողը, թե՛ ուսուցիչը վստահ կլինեն, որ իրավիճակն իրենց վերահսկողության տիրույթում է:

Կարծում ենք սույն հետազոտության ընթացքում արված արձանագրումները մեծապես կօգնեն մեզ՝ ուսուցիչներիս, կառուցողական ու բարձր որակի հարաբերություններ ստեղծել սովորողի ծնողների հետ հաշվի առնելով, որ երկու կողմի նպատակն ու խնդիրը մեկն է՝ արժանի սերունդ ունենալը:

Ամփոփում

<<Մեր երեխաները, մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>: Ա.Ս. Մակարենկո

Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ նաև աշխարհի ապագա պատմությունը:

<<Երեխային դաստիարակում է ամեն ինչ՝ առարկաները, երևույթները, սակայն ամենից շատ մարդիկ, և առաջին հերթին ծնողները>>: Ա.Ս. Մակարենկո

<<Երեխաները երկրի բնական ծաղիկներ են, իսկ այդ ծաղիկներին առաջին հերթին աճեցնում են ծնողները>>: Ա.Մ. Գորկի

Օգտագործված գրականության ցանկ

1. Ջադոյան Ա.Մ., Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում/ Մանկավարժություն N 1
ՀՑԴ 373 Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014։
2. Հարությունյան Գ. Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Ե. 2003
3. Մանկության հիմնախնդիրները ժամանակակից հայ ընտանիքում 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները, գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե. 2016
4. Աստրյան Ա.Ա. Դպրոցամուտը՝ սոցիալական նոր միջավայրին երեխայի հարմարվելու կենսափուլ, Մանկավարժություն, 2011 հմ. 7

Դասի պլան 1

Ամիս, ամսաթիվ ----------

Առարկա - Մայրենի

Դասարան - երրորդ

Դասի տիպը- Էքսկուրսիոն-գործնական դաս

Դասի թեման - Նամակ թեմայի ամփոփման դաս

Դասի նպատակները՝

- Լուսաբանել նամակի կառուցվածքը՝ սկիզբ, միջնամաս, ավարտ
- Սովորեցնել անձնական և պաշտոնական նամակների լեզվառճական առանձնահատկությունները
- Զևավորել արդյունավետ հաղորդակցվելու կարողություն
- Գործնականում ցույց տալ նամակը ստանալու, ուղարկելու ընթացքին

Վերջնարդյունքը՝

- Կկարողանա գրել նամակ՝ պահպանելով կառուցվածքը
- Կկարողանան գրել անձնական և պաշտոնական նամակներ
- Ուսման նկատմամբ հետաքրքրություն կավելանա:
- Գործնականում կծանոթանան նամակ ստանալու և ուղարկելու գործընթացին՝ այցելելով ծնողներից մեկի աշխատավայր՝ Հայփոստ

Միջառարկայական կապը՝ հայոց լեզու, մաթեմատիկա,

Խաչվող հասկացություններ՝

Կայունություն և փոփոխություն,
Անհատներ և փոփոխություններ,
Անհատներ և մշակութային արժեհամակարգ

Օգտագործվող մեթոդներ-էքսկուրսիա շրջայց Հայփոստի մասնաճյուղերից մեկը, Հարց ու պատասխան

Հաջողության չափանիշները – Խմբի բոլոր անդամները պետք է կարողանան բացատրել նամակ ուղարկելու հերթական քայլերը:

Վերահսկում, միջամտում – Անընդհատ մոտենալ խմբերին, հետևել նրանց աշխատանքին և պատասխանել այն հարցերին, որոնք առաջացել են խմբի անդամների մոտ:

Դասի ընթացքը-Կրկնել սովորած տեղեկատվությունը Նամակ թեմայի վերաբերյալ: /5ր/

Աշակերտները տանը նախապես գրել են նամակներ միմյանց, այցելելով Հայփոստի մասնաճյուղ նրանք լսելով աշխատակցի / Ինչպես արդեն նշեցի, աշխատակցուհին ծնողներից մեկն էր, թեև կարծում եմ կարելի է այս այցելությունները ամենամյա դարձնել այդ թեման անցնելիս, քանի որ աշակերտների ստացած տպավորությունները և նրանց ոգևորությունը անասել էր, իսկ դասը արդյունավետ և հետաքրքիր/ ցուցումները, գործնականում տեսան, թե ինչ փուլերով է իրականացվում նամակի ստացման, ուղարկման գործընթացը: Ընթացքում հարցեր էին ուղղում աշխատակցուհուն, պարզում այս կամ այն մանրամասնությունը ժամանակակից նամակագրության մասին: Վերջում նամակները կշռեցին, կնքեցին, իրար փոխանակեցին: /30ր/

Տնային աշխատանք: Գրել նամակհեռվում ապրող հարազատներից մեկին: / 5ր/

Գնահատումը – Որպես բացառություն, այդ դասին բոլորը բարձր գնահատական ստացան, քանի որ մեծ բավականություն ստացանք դասից բոլորս՝ թե՛ ես, թե՛ աշակերտները: /5 ր/

Դասի պլան 2

Ամիս, ամսաթիվ ----------

Առարկա - Մայրենի

Դասարան - առաջին և երկրորդ

Դասի տիպը- համագործակցային դաս-միջոցառում

Դասի թեման - Գրքի տոնին նվիրված դաս-միջոցառում

Դասի նպատակները՝

- Լուսաբանել գրքի տոնի ստեղծման պատմությունը:
- Ճանաչելի դարձնել հայ ճանաչավոր մտավորականներին:
- Սովորեցնել սիրել և գնահատել Ամենայն հայոց բանաստեղծ Հ.Թումանյանին և՛ որպես մարդու, և՛ որպես հասարակական գործչի, և՛ որպես սիրված մանկագրի:
- Աշակերտների մոտ ձևավորել առաջադրանքը համագործակցելով կատարելու հմտություններ:
- Զևավորել և զարգացնել ստեղծագործական միտածողությունը:
- Նպաստել դիմացինին լսելու, նրա կարծիքի հետ հաշվի նստելու կարողության ձևավորմանը:
- Ամրապնդել դպրոց-ծնող կապը

Վերջնարդյունքը՝

- Կկարողանալ ըստ արժանվույնս գնահատել հայ մշակույթն ու արվեստը:
- Կամրապնդվի գրողի, նրա ստեղծագործությունների մասին գիտելիքները:
- Ուսման նկատմամբ հետաքրքրությունն կավելանա:
- Կսովորեն գնահատել միմյանց աշխատանքը՝ արևորելով յուրաքանչյուրի դերն ու ներդրումը կատարված աշխատանքում:

Միջառարկայական կապը՝ հայոց լեզու, գրականություն, պատմություն, երաժշտություն,

Խաչվող հասկացություններ՝

Պատճառ և հետևանք,
Անհատներ և փոփոխություններ,
Անհատներ և մշակութային արժեհամակարգ

Օգտագործվող մեթոդներ- Բեմադրություն, կարճ դասախոսություն, հարց ու պատասխան,

Դասարանի կահավորումը- թեմային համապատասխան ձևավորում, պաստառներ, տվյալ ժամանակաշրջանին համապատասխան կահ-կարասիք, փուչիկներ, գրքեր և այլն:

Դասի ընթացքը-

1.Տոնի ստեղծման պատմության լուսաբանում /3ր/

2. Հ.Թումանյանի կյանքի վերաբերյալ հետաքրքրաշարժ դրվագների ներկայացում /5ր/

3. Հ.Թումանյանի մանկական ստեղծագործությունների ներկայացում /5ր/

4. Բեմադրություն առաջին դասարանի սաների մասնակցությամբ, այնուհետև 2-րդ դասարանի սաների մասնակցությամբ: /20ր// Ծնողների մասնակցությունը բավականին մեծ էր և՛ դասասենյակի ձևավորման, և՛ բեմական զգեստների պատրաստման գործում, որն էլ միջոցառման հաջողության գրավականներից էր:

5. Գրքեր նվիրելու արարողության կազմակերպում ծնողների, դասվարների մասնակցությամբ: /5ր/

Գնահատում: Ամփոփիչ գնահատում /5ր/

Տնային աշխատանք: Գրել շարադրություն <Թումանյանն իմ աչքերով> /2ր/

Դասի պլան 3

Ամիս, ամսաթիվ ----------

Առարկա - Մայրենի

Դասարան - 5-րդ

Դասի տիպը- ամփոփիչ դաս

Դասի թեման - Հեքիաթ բաժնի ամփոփում

Դասի նպատակները՝

- Ստուգել, համրագումարի բերել հեքիաթ ժանրի մասին ձեռք բերված գիտելիքները
- Ճանաչելի դարձնել հայ նշանավոր հեքիաթագիրներին, նրանց ստեղծագործությունները:
- Սովորեցնել սիրել և գնահատել մեր գրականությունը, արվեստը
- Ուսումնառաքանողական և ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացում
- Արդյունավետ հաղորդակցման կարողությունների զարգացում

Վերջնարդյունքները՝

- Կկարողանա ըստ արժանվույնս գնահատել հայ մշակույթն ու արվեստը:
- Կճանաչի հեքիաթ ժանրը և դրան բնորոշ առանձնահատկությունները:
- Կզանազանի հայ և օտարազգի հեքիաթագիրներին և նրանց ստեղծագործությունները
- Ուսման նկատմամբ հետաքրքրությունն կավելանա:
- Կսովորեն գնահատել միմյանց աշխատանքը՝ արևորելով յուրաքանչյուրի դերն ու ներդրումը կատարված աշխատանքում:

Միջառարկայական կապը՝ հայոց լեզու, գրականություն, պատմություն, նկարչություն

Խաչվող հասկացություններ՝

Օրինաչափություն
Անհատներ և փոփոխություններ,
Անհատներ և մշակութային արժեհամակարգ

Օգտագործվող մեթոդներ- Ինտերակտիվ/ փոխներգործուն/, դիդակտիկ նկարագրում ու ցուցադրում, ինքնուրույն աշխատանքի մեթոդ, հարց ու պատասխան:

Դասարանի կահավորումը-Դասագրքեր, բառարաններ, պաստառներ թեմայի վերաբերյալ, դասասենյակի համապատասխան ձևավորում, փուչիկներ, հեքիաթի գրքեր և այլն:

Դասի ընթացքը-

1.Տնային աշխատանքի ստուգում, սխալների քննարկում: /6 ր/

2. Օրվա խորհրդի քննարկում: / 2ր/

3. Պաստառների ներկայացում աշակերտների կողմից:/15ր/

4. Անցած հեքիաթների ներկայացում, համառոտ ներկայացում աշակերտների կողմից: /10ր/

5. Հիմնաբառերի խաղի կազմակերպում /5ր/

6. Անդրադարձ և ամփոփում / 3ր/

7. Գնահատում /3ր/

8. Տնային աշխատանք Գրել այդ օրվա տպավորությունների մասին փոքրիկ շարադրանք /1ր/